

<https://doi.org/10.59546/18290744-2025.4-6-104>

ԶՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան,
իրավ. գիտ. թեկնածու*

ZORAYR HARUTYUNYAN

*Advocate, Member of the Chamber of Advocates of the Republic of Armenia,
PhD in Law*

ЗОРАЙР АРУТЮНЯН

*Адвокат, Член Палаты адвокатов Республики Армения,
канд. юрид. наук*

**ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՄԲ
ՊԱՏՃԱՌՎԱԾ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**PRACTICAL ISSUES OF COMPENSATION FOR
THE NON-PECUNIARY DAMAGE CAUSED BY A VIOLATION OF
THE FUNDAMENTAL RIGHT TO FREEDOM**

**ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ КОМПЕНСАЦИИ НЕМАТЕРИАЛЬНОГО
ВРЕДА, ПРИЧИНЕННОГО НАРУШЕНИЕМ ОСНОВНОГО ПРАВА
НА СВОБОДУ**

Ներածություն

Մարդու հիմնական իրավունքները, դրանց պաշտպանությունն ու խախտված իրավունքների արդյունքում պատճառված նյութական, ինչպես և ոչ նյութական վնասի հատուցումն՝ անխոս անկյունաքարային նշանակություն ունեն ցանկացած իրավական պետության համար:

Պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրության երրորդ հոդվածն ուղղակի պարտականություն է նախատեսել հանրային իշխանության համար հարգելու և պաշտպանելու մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ դրանք միաժամանակ հռչակելով անմիջականորեն գործող իրավունք:

Պետք է առանձնացնել 2015 թվականի փոփոխություններով վերաձևակերպված ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածը, որն առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրում է յուրաքանչյուր անձի իրավունքը վնասի հատուցման, եթե այդ վնասը պատճառվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց

ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ: Սահմանադրության ուժով օրենսդիրն պարտավոր է օրենքով սահմանել նման վնասի հատուցման պայմաններն ու կարգը¹:

Այսպես, օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածի ուժով՝ արդարացված մեղադրյալն իրավունք ունի պահանջելու անօրինական քրեական հետապնդում հարուցելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու, դատապարտելու, ինչպես նաև իրավունքների կամ ազատությունների անօրինական այլ սահմանափակումների հետևանքով իրեն պատճառված վնասի հատուցում:

Հատկանշական է, որ մեջբերված սահմանադրական և օրենսդրական կարգավորումներով չի նախատեսվում պատճառված վնասի տարանջատում՝ նյութականի և ոչ նյութականի: Նշվածի համադրությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի չորրորդ մասի և հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցմանը նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի հետ թույլ է տալիս հանգել միանշանակ հետևության առ այն, որ պետական մարմնի կամ պաշտոնատար անձանց կողմից մարդու հիմնարար իրավունքներին պատճառված ոչ նյութական վնասը ևս ենթակա է հատուցման:

Անհրաժեշտ է նշել, որ ոչ նյութական վնասի հատուցելի լինելն օրենսդրորեն ամրագրելու տեսանկյունից առանցքային նշանակություն է ունեցել ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ընդունված ՍԴՈ-1121 որոշումը, որով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով բարոյական վնասը չի դիտել որպես վնասի տարատեսակ և չի ապահովվել բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն, ճանաչվել էր ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Հաստատված համարելով, որ մարդու հիմնարար իրավունքների խախտմամբ պայմանավորված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման, այնուամենայնիվ հարց է առաջանում թե որքանով է վնասի հատուցման քաղաքացիաիրավական գործող կառուցակարգը գործունե աշխարհում հանդիսանում դրա համար: Այս առումով հիշատակման է արժանի նաև Սահմանադրության 75-րդ հոդվածը, որն ամրագրել է հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար *անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր* սահմանելու պարտադիր լինելը:

Հատկանշական է, որ անդրադառնալով ոչ նյութական վնասի հատուցման հարցերին՝ ՀՀ Սահմանադրական դատարանը, վերն արդեն իսկ հիշատակված, ՍԴՈ-1121 որոշմամբ արձանագրել է.

«ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը վկայում է այն մասին, որ բարոյական վնասը և բարոյական վնասի նյութական հատուցման հնարավորությունը բխում են մարդու իրավունքների պաշտպանության հարցում որդեգրված սահմանադրաիրավական մոտեցումներից: Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»:

Քրեական հետապնդման մարմինների կողմից հետապնդման ենթարկված, հիմնարար իրավունքների նկատմամբ, հարկադրանքի միջոցների կիրառմամբ, ինտենսիվ ներգործություն կրած և հետագայում ամբողջությամբ արդարացված անձանց պատճառված ոչ նյութա-

¹ Տե՛ս Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. – Եր.: Տիգրան Մեծ, 2016, էջ 74:

կան վնասի հատուցման իրավունքը, այդ իրավունքի իրացման գործնական հնարավորությունն ու դրանից բխող կառուցակարգային խնդիրները հանդիսանում են սույն հետազոտության առարկան:

Հիմնական հետազոտություն

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է վնաս պատճառելու հետևանքով իրավահարաբերությունների ծագման համար անհրաժեշտ պայմանների առկայության հարցին: Մասնավորապես՝ բարձր ատյանն արձանագրել է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է **Ա.** պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, **Բ.** վնասների, **Գ.** վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու **Դ.** պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում՝ նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման²:

Դելիկտային իրավահարաբերությունների, դրանց օրենսդրական կարգավորումների և դրանց գործնական նշանակության ամբողջական վերլուծության տեսանկյունից նպատակահարմար է ուսումնասիրել իրավահարաբերությունների ծագման համար անհրաժեշտ յուրաքանչյուր պայմանն առանձին:

Ա. Այսպես, վնաս պատճառած կողմի (սույն դեպքում քրեական հետապնդման մարմնի) ոչ օրինաչափ վարքագծի պարտադիր պայմանի վերլուծության համար առանցքային նշանակություն ունի հայաստանյան օրենսդրության այն յուրահատկությունը, ըստ որի՝ քրեական հետապնդման ենթարկված և հետագայում արդարացված անձը ոչ միայն իրավունք ունի ստանալու փոխհատուցում իր արդարացման հետևանքով, այլ նաև նրա նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառումը ներպետական իրավունքի իմաստով համարվում է «անօրինական»³:

Այսինքն՝ ցանկացած քրեադատավարական հարկադրանքի միջոց կիրառելու հիմքերի առկայությունը, քրեական վարույթի ընթացքում դրանց օրինականությունը, դատական ատյանների կողմից քրեադատավարական օրենքի խախտման բացակայության արձանագրումը **որևէ կերպ չեն բացառում արդարացումից հետո անձի՝ փոխհատուցում ստանալու իրավունքի իրացման հնարավորությունն** առնվազն քննարկվող պայմանի հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ:

Վերոշարադրյալից հետևում է, որ անմեղության հիմքով անձին արդարացնելու, քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու արդյունքում քրեադատավարական վարույթային ակտով անձը ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ. **ապա այդ ակտով արդեն իսկ հաստատվում է, որ նախկինում կիրառված հարկադրանքի միջոցները եղել են «անօրինակ»՝ փոխհատուցում ստանալու համար անհրաժեշտ պայմանի առկայության իմաստով:**

Այսպիսով՝ հենց արդարացվածի կարգավիճակ տրամադրող դատավճիռը կամ որոշումն է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով այն փաստաթուղթը, որով քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ազատության իրավունքի սահմանափակում նախատեսող հարկադրանքի միջոցի կիրառումը հավասարեցվում է պետական մարմնի ոչ օրինաչափ վարքագծին:

² Տե՛ս Նատայա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին թիվ ՀՔԴ3/0016/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Նորիկ Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով 2020 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռ, կետեր 32-34:

Բ. Վերլուծելով վնասի առկայությունը, որպես իրավահարաբերության ծագման պարտադիր պայման հարկավոր է նշել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) ՀՀ գործող օրենսդրության ոգուն համահունչ իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ ընդհանուր կանոնի համաձայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիայի) 5-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված հատուցման տրամադրումը կախված է համապատասխան անձի կողմից նույն հոդվածի նախորդ կետերի խախտմամբ իրեն պատճառված վնասը հիմնավորելու հանգամանքից⁴:

Այդուհանդերձ, ՄԻԵԴ գտել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտման արդյունքում հոգեկան տառապանքի հետևանքով ոչ նյութական վնասն ունի որոշ առանձնահատկություններ: **Գործում է այն կանխավարկածը, որ նշված հոդվածի խախտմամբ ձերբակալումն անձին պատճառում է որոշ հոգեբանական փառապանքներ** ոչ միայն ձերբակալման ընթացքում, այլ նաև դրանից հետո: Նման տառապանքները, որոնք պարտադիր չէ, որ հասնեն հոգեկան խանգարումների մակարդակի կամ արտահայտվեն արտաքին ախտանիշներով, անխուսափելիորեն չեն պահանջում այնպիսի բացառիկ ապացույցների միջոցով հաստատում, ինչպիսիք են հոգեբուժական կամ բժշկական փաստաթղթերը⁵:

ՄԻԵԴ նաև արձանագրել է, որ անօրինական կերպով ձերբակալված անձին որևէ փոխհատուցման տրամադրման մերժումն այն հիմքով, որ վերջինիս չի ներկայացրել ոչ նյութական վնասի պատճառված լինելը հաստատող ապացույցներ, ինքնին խիստ ձևականացված է և համարվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում⁶:

Այսինքն՝ անօրինական ազատությունից զրկման դեպքերում գործում է որոշակի տառապանքներ կրած լինելու կանխավարկածը, իսկ քրեական վարույթով արդարացված անձի նկատմամբ կիրառված ազատության հիմնարար իրավունքի սահմանափակում նախատեսող հարկադրանքի միջոցը, դրանով պայմանավորված իրավունքի փաստացի սահմանափակումն ինքնին հանդիսանում են անձի իրավունքներին պատճառված վնասի հաստատում, այսինքն՝ վնասի առկայությունը *a priori* դառնում է հաստատված հանգամանք:

Անձին ազատությունից զրկելը որպես կանոն ինքնին ենթադրում է որոշ տառապանքների պատճառում, սակայն խնդիրը հիմնականում կայանում է նրանում, որ դատարանները քննության առարկա են դարձնում ոչ նյութական վնասի փոխհատուցման չափը և դրա հաշվարկման մեխանիզմը: Այդ համատեքստում դիտարկվում են մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ ազատագրված անձի անձնային առանձնահատկությունները, կալանքի ընթացքում կրած տառապանքների բնույթը, դրանց ինտենսիվությունն ու տևողությունը, ինչպես նաև կոնկրետ գործի համատեքստում դրանց ազդեցությունը տվյալ անձի վրա:

Գ. Ոչ օրինաչափ վարքագծի և պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապը չունի լրացուցիչ հիմնավորման կարիք, նկատի ունենալով, քրեական վարույթի շրջանակում արդարացված անձի նկատմամբ ազատության իրավունքի սահմանափակում նախատեսող հարկադրանքի միջոցի կիրառումը որպես ոչ օրինաչափ վարքագծի հաստատումը և ազատության իրավունքի սահմանափակման պայմաններում ոչ նյութական վնաս կրելու

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Ուոսսինկն ընդդեմ Նիդեռլանդների գործով 1990 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռ, կետ 38:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Զաբարոֆն ընդդեմ Բուլղարիայի գործով 2016 թվականի մայիսի 31-ի վճիռ, կետ 84:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Դանեն ընդդեմ Բուլղարիայի գործով 02.09.2010 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռ, կետեր 34-35:

կանխավարկածը: Ակնհայտ է, որ հոգեկան տառապանքը բխում է ազատության իրավունքի սահմանափակում նախատեսող հարկադրանքի միջոցից, որի կիրառումն իր հերթին իրավամբ պետք է գնահատվի իբրև ոչ օրինաչափ վարքագիծ:

7. Հատկանշական է նաև, որ քննարկվող իրավիճակում պարտապանի մեղքի առկայությունը, որպես վնասի հատուցման իրավահարաբերությունների ծագման նախապայման չեզոքացվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի երրորդ մասով, որի համաձայն՝

«Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ վնաս պատճառելիս պաշտոնապար անձի մեղքի առկայությունից»:

Ելնելով ամբողջ վերոգրյալից՝ ակնհայտ է դառնում, որ արդարացված յուրաքանչյուր անձում նկատմամբ կիրառված է եղել ազատության հիմնարար իրավունքի սահմանափակում նախատեսող հարկադրանքի միջոց իրավունք ունի ստանալու ոչ նյութական վնասի հատուցում, իսկ հատուցում ստանալու պահանջ ներկայացնելու համար բոլոր անհրաժեշտ նախապայմանների առկայությունը բխում է գործող օրենսդրությունից և արդարացվածի կարգավիճակ շնորհող դատավարական ակտից:

Այսինքն, ազատության իրավունքի սահմանափակում կրած և հետագայում արդարացված անձի կողմից Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացվող ոչ նյութական վնասի հատուցման պահանջ քննելիս ՀՀ դատարանների կողմից բովանդակային քննության առավելապես պետք է ենթարկվեն վնասի հատուցման չափը և դրա հաշվարկին վերաբերող հարցերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ:

Պատճառված ոչ նյութական վնասի դիմաց վճարվելիք փոխհատուցման չափի հաշվարկման վերաբերյալ առկա են տարաբնույթ մոտեցումներ: Հատկանշական է, որ այս հարցի վերաբերյալ առկա չէ միասնական դատական պրակտիկա, ոչ էլ դոկտրինալ միասնական կամ առնվազն գիտական շրջանակում առավել հավանություն վայելող մոտեցում:

Բարոյական վնասի փոխհատուցմանը վերաբերող Ռուսաստանի, Անգլիայի, ԱՄՆ և Գերմանիայի օրենսդրությունների և դատական պրակտիկաների ուսումնասիրությունը ցույց են տալիս այս իրավական ինստիտուտի կիրառման ընթացքում առաջացող խնդիրների նմանատիպությունը: Ուշադրություն է գրավում այն, որ բացակայում է բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտի վերաբերյալ օրենսդրական մանրակրկիտ կարգավորում ոչ միայն նախադեպային իրավունքի երկրներում, այլ նաև ստատուտային իրավունքի երկրներում: Բարոյական վնասի փոխհատուցման չափի գնահատման համար հստակ ձևակերպված չափորոշիչների և ընդհանուր մեթոդի բացակայությունը բարդ իրավիճակ է ստեղծում դատական մարմինների համար⁷:

Նույնանման իրավիճակ է ստեղծվել նաև հայաստանյան դատական պրակտիկայում, ուր դատարանները չունեն ոչ նյութական վնասի փոխհատուցման չափի հաշվարկման հստակ չափորոշիչներ և մեթոդաբանություն:

⁷ Տե՛ս *Эрделевский А. М.*, Компенсация морального вреда: анализ и комментарий законодательства и судебной практики, 3-е изд., испр. и доп., М., Волтерс Клувер, 2004, էջ 200-201:

Շարադրվածի, ինչպես նաև քաղաքացիաիրավական գործերով արդարադատություն իրականացնող դատարանների գերծանրաբեռնվածության, այլ օբյեկտիվ պատճառներով՝ հիմնարար իրավունքների խախտումների արդյունքում պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջի մասին յուրաքանչյուր դատական գործի վերաբերյալ քննությունը տարիներ է տևում:

Այսպես, օրինակ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի վարույթում քննվող թիվ ԵԴ/8851/02/19 դատական գործով արդարացված անձի կողմից իր նկատմամբ իրականացված քրեական հետապնդման արդյունքում պատճառված նյութական և ոչ նյութական վնասների հատուցման պահանջի մասին հայցադիմումը ներկայացվել է դեռևս 2019 թվականի մարտի 28-ին, սակայն մինչ օրս (հինգ տարուց ավելի) դատական գործը հանդիսանում է անավարտ:

Մեկ այլ՝ թիվ ԵԴ/40326/02/19 դատական գործով նմանատիպ հայցադիմումը ներկայացվել է 2019 թվականի նոյեմբերի 20-ին, այն մասնակի բավարարելու մասին վճիռ է կայացվել 2021 թվականի հուլիսի 23-ին, որն օրինական ուժի մեջ է մտել 2023 թվականի հուլիսի 19-ին (հայցադիմումի ներկայացումից շուրջ հինգ տարի անց):

Նկատի ունենալով քննարկման առարկա իրավահարաբերությունների վերաբերյալ հայաստանյան իրավական համակարգի վերոգրյալ առանձնահատկություններն ու բարձր դատարանների կողմից ձևավորված հիշյալ կայուն իրավունքի առկայությունը, ենթադրվում է, որ առանձին դատական վեճերի լուծումը չպետք է իրենից բարդություն ներկայացնի: Դատարանների կողմից հայցադիմումների դատական քննության ընթացքում ուշադրության կենտրոնում պետք է մեծապես լինի պատճառված ոչ նյութական վնասի չափի որոշման խնդիրը:

Քննարկման առարկա հանդիսացող քաղաքացիաիրավական վեճերի բարդության աստիճանի հստակեցման և դատաքննության ողջամիտ ժամկետում իրականացման սահմանադրական պահանջի իրացվելիության ապահովման տեսանկյունից էական նշանակություն ունի նաև ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված թիվ ԲԴԽ-65-Ո-165 «Գործերի քննության ուղենիշային ժամկետները՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության սահմանելու մասին» որոշումը:

Այսպես, ըստ որոշման առաջին գլխով սահմանված քաղաքացիական գործերի բարդության մակարդակը հաշվարկվում է փաստական և իրավական բարդության չափանիշների գործակիցների գումարման միջոցով: Հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցմանը վերաբերող քաղաքացիական գործերին վերաբերելի, որոշմամբ ամրագրված չափանիշների գործակիցների գումարման արդյունքում հնարավոր է հանգել միանշանակ հետևության, որ կախված ներկայացված պահանջների քանակից քննարկվող դատական գործերը համապատասխանում են կամ պարզ, կամ միջին բարդության մակարդակներին:

Նույն որոշման համաձայն՝ քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության պարզ մակարդակ ունեցող դատական գործերի քննությունը պետք է իրականացվի մեկից երեք ամսվա ընթացքում, իսկ միջին մակարդակի բարդության գործերի քննությունը՝ չորսից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածով նախատեսված կարգավորման լույսի ներքո և մեջբերվածի համատեքստում հնարավոր է կասկածի տակ առնել ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածով նախատեսված՝ պատճառված վնասի հատուցման իրավունքի իրացվելիության երաշխավորմանն ուղղված ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված և վերը վերլուծության ենթարկված կառուցակարգերի և ընթացակարգերի արդյունավետությունը:

Ավելին, առանձին դեպքերում հնարավոր է արձանագրել այդ կառուցակարգերի և ընթացակարգերի գործադրման արդյունքում մեկ այլ՝ արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղադրատարր ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտում, որի պարագայում հանրային իշխանության մեկ մարմնի (քրեական վարույթն իրականացնող մարմնի) ոչ օրինաչափ գործողությունների հետևանքով վնաս կրած մարդը կրկին անգամ վնաս է կրում, սակայն արդեն մեկ ուրիշ հանրային իշխանության մարմնի (քաղաքացիական գործով քննություն իրականացնող դատական ատյանների) ոչ օրինաչափ գործողությունների հետևանքով:

Ուշադրության է արժանի նաև այն, որ հայրենական դատական ատյաններում գործերի քննությունը ողջամիտ ժամկետներում իրականացնելու սահմանադրական պահանջի վերաբերյալ առաջացող խնդիրների տարածվածության բարձր աստիճանով պայմանավորված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2020 թվականին հրապարակվել է արտահերթ զեկույց որն ամբողջությամբ նվիրվել է այս խնդրի ուսումնասիրությանը:

Հատկանշական է, որ նույն հայաստանյան դատական պրակտիկայում առկա են ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի խախտման փաստը հաստատելու և պատճառված ոչ նյութական վնասի հատուցում տրամադրելու օրինակներ: Այսպես, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից թիվ ԵԴ/31501/02/19 դատական գործով քննության է առնվել ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի խախտման փաստը հաստատելու և պատճառված ոչ նյութական վնասի գումարը բռնագանձելու պահանջի մասին հայցադիմումը, որով կայացված վերջնական դատական ակտով դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

*«(...) ինչպես արդար դատաքննության, այնպես էլ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների անբակտերի մասն է կազմում իրավունքը խախտված անձի հայցով հարուցված դատական վարույթի լուծումը ողջամիտ ժամկետում, քանի որ **ուշացած արդարադատությունը, երբեմն, մերժված արդարադատություն է:***

*(...) Այսպիսով, դատարանն արձանագրում է, որ արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները ներառում են անձի հայցի հիման վրա հարուցված դատական վարույթի քննությունը և լուծումը ողջամիտ ժամկետում, քանի որ **գործի քննության ժամկետի երկարացումները կարող են հանգեցնել ինչպես նյութական և ոչ նյութական վնասների, այնպես էլ անձի մոտ տվյալ գործի նկատմամբ իրավական «հետաքրքրվածության» կորստին, ինչն իր հերթին կխաթարի դատական պաշտպանության իրավունքի բուն էությունն** այն առումով, որ այդ իրավունքի իրականացումը տրամաբանորեն պետք է հանգեցնի անձի խախտված իրավունքների իրական /ռեալ/ վերականգնմանը (...):»:*

Այս առումով, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից արտահերթ զեկույցում ճշմարտացիորեն նշվել է, որ առանձին գործերով ողջամիտ ժամկետների խախտման փաստի արձանագրման և վնասի փոխհատուցման վերաբերյալ դատական պրակտիկայի նմանօրինակ դեպքերը համակարգային առումով *չեն լուծում իրավունքի վերականգնման կառուցակարգերի բացակայության հարցը*⁸:

Եզրակացություն

Ելնելով վերը ներկայացվածից, ինչպես նաև հաշվի առնելով դեղիկտային իրավահարաբերությունների առանձնահատկություններն ու դատական պրակտիկայում ի հայտ եկող

⁸ Տե՛ս ՀՀ ՄԻՊ «Ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի խախտման դեպքում իրավունքի վերականգնման մեխանիզմների բացակայության վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, Եր., 2020 թ., էջ 28:

համակարգային խնդիրները, կարելի է հանգել այն հետևության, որ ազատության հիմնարար իրավունքի սահմանափակմամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման սահմանադրական իրավունքի իրացմանն ուղղված օրենսդրական կառուցակարգերն ու ընթացակարգերը հաճախ չեն ապահովում այդ իրավունքի արդյունավետ իրացումը: Արդյունքում՝ նման գործարկումներին դիմած անձանց նկատմամբ հաճախակի արձանագրվում են արդար դատաքննության իրավունքի խախտումներ, որոնք հակասում են թե՛ Սահմանադրության և թե՛ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ստանդարտներին:

Սահմանադրական իրավունքի իրացվելիությունը երաշխավորող իրավակարգավորումների բարեփոխման անհրաժեշտությունն ակնհայտ է, իսկ վերլուծված դեպքերի իրավահարաբերությունների նկատմամբ կիրառման ենթակա գործող իրավունքի առանձնահատկությունները հաշվի առնելով հնարավոր է հանգել փոխհատուցում ստանալու իրավունքի իրացման համար առավել արդյունավետ կառուցակարգերի ու ընթացակարգերի նախատեսման հնարավորության մասին հետևության, մասնավորապես՝ դատական քննության պարզեցված կարգի կիրառման, կամ անգամ վեճերի լուծման արտադատական մեխանիզմների ներդրման միջոցով, նաև հաշվի առնելով պետության պոզիտիվ պարտականությունը փոխհատուցելու իր իսկ կողմից պատճառված վնասը:

Այս առումով, սակայն, պետք է նշել, որ իրավունքի արդյունավետ իրացվելիությունն ապահովող տարբերակների վերլուծությունն ու հեղինակային լուծման առաջարկը դուրս է սույն հետազոտության սահմաններից, որն ընդհակառակը՝ հետապնդում է խնդրի առկայությունն արձանագրելու ու դրա վերաբերյալ գիտական հանրության շրջանում քննարկում նախաձեռնելու նպատակ:

Ամփոփագիր: Սույն գիտական հոդվածի շրջանակում քննարկման առարկա է դարձվում քրեական վարույթի ընթացքում կիրառված հարկադրանքի միջոցի արդյունքում ազատության հիմնարար իրավունքի սահմանափակում կրած և հետագայում արդարացված անձանց կողմից ոչ նյութական վնասի փոխհատուցում պահանջելու իրավունքը: Ուսումնասիրության է ենթարկվում հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները, դրա վերաբերյալ ձևավորված դատական պրակտիկան, գնահատվում է դրա իրացման երաշխավորմանը միտված օրենսդրական կառուցակարգերի արդյունավետությունը: ՀՀ Վճռաբեկ դատարանի ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի վերլուծությամբ փաստվում է հայաստանյան ներպետական իրավակարգավորումների առանձնահատկությունն ու քննարկվող ոչ նյութական վնասի հատուցման յուրահատկությունները: Առանձին ուշադրություն է դարձվում հիմնարար իրավունքների խախտման արդյունքում պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի ներկայացմամբ նախաձեռնվող քաղաքացիական գործերով ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումների խնդրին: Հայաստանյան օրենսդրության ու դատական պրակտիկայի ամփոփմամբ բխեցվում է պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման համար նախատեսված ընթացակարգերի ու կառուցակարգերի անարդյունավետության խնդիրը, որի արձանագրումն ինքնին հանդիսանում է սույն հոդվածի նպատակը:

Annotation: This scientific article explores the right of individuals whose fundamental right to liberty was restricted due to coercive measures applied during criminal proceedings and who were subsequently acquitted to seek compensation for non-pecuniary damage. It examines the procedures and conditions governing such compensation arising from violations of fundamental rights and wrongful convictions, analyzes the established judicial practice on the matter, and evaluates the effectiveness of legislative mechanisms designed to ensure the enforcement of this compensation. The analysis of well-established case law, as set forth by the Cassation Court of the Republic of Armenia and the European

Court of Human Rights, facilitates the identification of distinctive features of domestic legal regulation in Armenia, as well as the specific characteristics of compensation for the non-pecuniary damage under consideration. Particular attention is devoted to issues related to violations of the right to a trial within a reasonable time in civil cases initiated by claims for compensation of non-pecuniary damage resulting from fundamental rights violations. Based on a comprehensive review of Armenian legislation and judicial practice, this article identifies the problem of inefficiency in the procedures and mechanisms established for realizing the right to compensation for non-pecuniary damage, the recognition of which constitutes its primary objective.

Аннотация. В рамках настоящей научной статьи предметом обсуждения является право лиц, чьё фундаментальное право на свободу было ограничено в результате применения меры принуждения в ходе уголовного производства на требование возмещения нематериального ущерба, которые впоследствии были оправданы. Нами был изучен порядок и условия возмещения нематериального ущерба, причинённого в результате нарушения основных прав и несправедливого осуждения, проанализирована сформированная судебная практика по данному вопросу, а также оценена эффективность законодательных механизмов, направленных на гарантирование реализации возмещения рассматриваемого ущерба. Анализ устоявшейся прецедентной практики, сформированной Кассационным судом Республики Армения и Европейским судом по правам человека, позволяет выявить особенности внутригосударственного правового регулирования в Армении и специфику возмещения рассматриваемого нематериального ущерба. Отдельное внимание уделяется проблемам, возникающим из нарушений права на рассмотрение дела в разумный срок по гражданским делам, инициированным вследствие подачи требований о возмещении нематериального ущерба, причинённого в результате нарушения фундаментальных прав. На основе обобщения законодательства и судебной практики Республики Армения выявляется проблема неэффективности процедур и механизмов, предусмотренных для реализации права на возмещение причиненного нематериального ущерба, констатация которой и является целью настоящей статьи.

Բանալի բառեր - արդարացված, հարկադրանքի միջոցներ, ազատության հիմնարար իրավունք, ոչ նյութական վնաս, փոխհատուցում ստանալու իրավունք:

Keywords: acquitted, coercive measures, fundamental right to liberty, non-pecuniary damage, right to compensation.

Ключевые слова: оправданный, меры принуждения, фундаментальное право на свободу, нематериальный вред, право на компенсацию.

Օգտագործված գրականության ցանկ

1. Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, Եր., Տիգրան Մեծ, 2016:
2. Эрделевский А. М., Компенсация морального вреда: анализ и комментарий законодательства и судебной практики, – 3-е изд., испр. и доп., М., Волтерс Клувер, 2004.
3. ՀՀ ՄԻԴ «Ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի խախտման դեպքում իրավունքի վերականգնման մեխանիզմների բացակայության վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, Եր., 2020 թ.:

Հարությունյան Զ. - ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու, էլիասցե՝ harutyunyanzorayr@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 31.08.2024 թ., տրվել է գրախոսության 31.08.2024 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. թեկնածու Ա. Հարությունյանի կողմից, ընդունվել է տպագրության 10.07.2025 թ.: